ՀՀ ՏՄՊՀՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՏՄՊՊՀ-ՄԱԱՊՁԲ -20/11

ք. Երևան «19» 03 2020թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Վահանյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ -ը, ի դեմս տնօրեն Տ. Ղարիբյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 335 730(երեք հարյուր երեսունհինգ հազար յոթ հարյուր երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և

---

[17] *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
_«ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի»	Սմարթլայն ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ	Ք.Երևան, Վարդանյան 110
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1150009537660100
Հ/Հ 900011566057	ՀՎՀՀ 01548908
ՀՎՀՀ 01538354	տնօրեն Տ.Ղարիբյան
Ա. Վահանյան	
----------	----------
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«19» 03 2020թ. կնքված
ՀՀ ՏՄՊՊՀ-ՄԱԱՊՁԲ -20/11 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի/աշխատանքի/ծառայության										մատակարարման	
Հ/Հ	անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	առավելագույն գինը[i]	ընդհանուր քանակը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	հասցեն	ժամկետը
1	Գրիչ, գնդիկավոր	Pen	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գնդիկավոր, տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքով, մեծ և փոքր չափի	հատ	40	250	10000	Ք.Երևան, Միեր Մկրտչյան 5բ	Մինչև սույն թվականի դեկտեմբերի 15-ը ներառյալ
2	Գրիչ, գելային	Gel Pen	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրիչ առնվազն 0.5 մմ ծայրով տարբեր գույների գելային	հատ	650	25	16250		
3	Մատիտ	Skyglory	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, կարծրությունը՝ HB	հատ	25	60	1500		
4	Թղթապանակ, արագակար, թղթյա	արագակար	ՀՀ	ՀՀ	Արագակար կավճած ստվարաթղթից մետաղական ամրակով, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար	հատ	55	634	34870		
5	Թղթապանակ կոշտ կազմով	Folder	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Ստվարաթղթից կազմեր երկարատև պահման գործերի համար, Բ տիպի, թելակապերով,ստվարաթղթի խտությունը առնվազն՝ 1,15 գ/սմ3, հաստությունը 0,3-ից մինչև 1,5 մմ:	հատ	850	55	46750		
6	Քանոն, մետաղյա	Ruler	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մետաղյա, գծաբաժանումով, 30սմ երկարությամբ	հատ	140	10	1400		

7	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	Impulse	Իմպուլս- Ա ՍՊԸ	ՀՀ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարերին ամրացնելու հնարավորությամբ:	հատ	8	2500	20000		
8	Ամրակ, փոքր	Paper clip	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Փոքր գրասենյակային ամրակներ մետաղական կամ պոլիմերային պատվածքով, առնվազն՝ 25-33 մմ երկարությամբ: Թղթի դարսը լիարժեք ամրության միասնական պահելու կարողությամբ:	տուփ	80	20	1600		
9	Ռետին հասարակ	Eraser	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Ռետին, սովորական, նախատեսված մատիտով գրվածները անհետք մաքրելու համար:	հատ	50	10	500		
10	Ամրակ, մեծ	Paper clip	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային ամրակներ, մետաղական կամ պոլիմերային, առնվազն 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար:	տուփ	200	10	2000		
11	Կարիչի մետաղալարեր, փոքր	Staples	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով առնվազն՝10 մմ/6 մմ:	տուփ	60	20	1200		
12	Կարիչի մետաղալարեր, միջին	Staples	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով առնվազն՝ 24 մմ/6 մմ:	տուփ	70	20	1400		
13	Սոսնձամատիտ, գրասենյակային	Glue Stick	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Չոր սոսինձ, գրասենյակային, նախատեսված թղթեր սոսնձելու համար:	հատ	120	15	1800		
14	Կարիչ 20-50 թերթերի համար	Stapler	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, առնվազն 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	500	15	7500		
15	Կարիչ 50-100 թերթերի համար	Staples	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, առնվազն 50-100 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	1550	15	23250		

16	Գծանշիչ	Skyglory	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Տարբեր գույների, նախատեսված ընդգծումներ, նշումներ կատարելու համար, տափակ ծայրով:	հատ	120	45	5400		
17	Դակիչ, միջին	Paper Punch	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Ծակոտիչ գրասենյակային՝ մինչև 20 թերթ դակելու համար:	հատ	500	5	2500		
18	Դակիչ, մեծ	Paper Punch	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Ծակոտիչ գրասենյակային՝ մինչև 36 թերթ դակելու համար:	հատ	3200	5	16000		
19	Սրիչներ	Sharpener	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային սրիչներ՝ մատիտների համար:	հատ	80	20	1600		
21	Գրասենյակայի ն դանակ մեծ	Cutter	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Դանակ գրասենյակային, 9մմ x 120մմ, պատյանը պլաստիկ է՝ ձեռքը ֆիքսող ռետինե փաթույթով, ծայրոցը մետաղական:	հատ	550	20	11000		
22	Գրասենյակայի ն դանակ փոքր	Cutter	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Դանակ գրասենյակային, 18մմ x 8սմ, պատյանը և ծայրոցը պլաստիկ :	հատ	80	20	1600		
23	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	Memo Paper	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Թուղթ նշումների համար գունավոր,կպչուն, տարբեր չափերի, տրցակներով	հատ	120	90	10800		
24	Թուղթ նշումների համար	Memo Paper	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Նշումների համար նախատեսված սպիտակ գույնի, տարբեր չափերի տրցակներով, առանձ սոսնձվածքի:	հատ	250	6	1500		
25	Գրենական պիտույքներ	Memo Paper	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Թերթիկներ նշումների համար, կպչուն, 45մմ x 12մմ, 5 գույն 25-ական էջ:	հատ	180	20	3600		
26	Շտրիխ վրձինով	Correction Fluid	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Վրձինով, հեղուկ, տարողությունն առնվազն 20մլ., նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստերը սպիտակեցնելու համար:	հատ	160	25	4000		

27	Շտրիխ/ժապավենային	Corrector	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Ժապավենային, նախատեսված տարբեր տեսակի թղթերի վրա տպագրված կամ գրիչով գրված տեքստերը սպիտակեցնելու համար:	հատ	320	20	6400		
28	Սեղմակ, փոքր	Binder clip	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մետաղյա սեղմակ, 19մմ չափի՝ առնվազն 20 թերթերի ամրացման համար:	հատ	10	199	1990		
29	Սեղմակ, միջին	Binder clip	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մետաղյա ամրակ, 25մմ չափի, առնվազն 40 թերթերի ամրացման համար:	հատ	15	100	1500		
30	Սեղմակ, մեծ	Binder clip	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մետաղյա ամրակ, 32մմ չափի, առնվազն 60 թերթերի ամրացման համար:	հատ	18	40	720		
31	Մկրատ	Scissors	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, առնվազն 20 սմ երկարությամբ:	հատ	290	10	2900		
32	Գրչատուփ	Pen holder	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Մետաղյա, ցանցապատ տարաներ գրիչների, մատիտների համար նախատեսված:	հատ	580	10	5800		
33	Ժողովների պլանավորման բլոկնոտ	Note book	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Օրգանայզեր A5 ձևաչափի, պինդ կամ փափուկ արհեստական կաշվով երեսպատված կազմով, նշումների համար, 2021 թվականի ամսաթվերով, պյունակավորված թերթերով՝ առնվազն 80 թերթ:	հատ	1600	25	40000		
34	Մարտկոց, AAA տեսակի	Sony	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, AAA ալկալիական:	հատ	100	60	6000		
35	Մարտկոց, AA տեսակի	Sony	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, AA ալկալիական:	հատ	100	30	3000		
36	Ապակարիչ	Remover	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Գրասենյակային ապակարիչ՝ միջին չափի ասեղներով կարված թոթերը քանդելու համար:	հատ	140	10	1400		

38	Թղթապանակ	Folder	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Թղթապանակ-ծրար, պլաստմասե եզրով:	հատ	200	50	10000		
39	Նոթատետրեր	Notebook	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Օրատետրեր, վանդակավոր կամ տողանի A5 ձևաչափի կազմը ամուր:	հատ	800	15	12000		
40	Հաշվասարք, գրասենյակայ ին	Calcul. machin	ARM DRAGON INTERNATIONAL TRADING LIMITED Accoun	ՉԺՀ	Հաշվապահական գործառույթների համար նախատեսված հաշվասարք՝ պրոֆեսիոնալ, 14 նիշ, սնուցման 2 աղբյուր (15,5 սմ*20,5 սմ):	հատ	3200	5	16000		

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարումը Կատարողը և/կամ նրա ներկայացուցիչը Պատվիրատուի պահանջով ապրանքը մատակարարում է Պատվիրատուի գտնվելու վայր առնվազն 3-4 (ե ր ե ք ի ց - չ ո ր ս) աշխատանքային օրվա ընթացքում:
Բոլոր ապրանքները լինեն չօգտագործված, նոր:

ԳՆՈՐԴ
«ՀՀ տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական
հանձնաժողովի»
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Սմարթլայն ՍՊԸ
Ք.Երևան, Վարդանյան 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
տնօրեն Տ.Ղարիբյան

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«19» 03 2020թ. կնքված
ՀՀ ՏՄՊՊՀ-ՄԱԱՊՁԲ -20/11 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192121/1	Գրիչ, գնդիկավոր	1000			3500			6000			10000			10000
2	30192128/1	Գրիչ, գելային	1625			5687.5			9750			16250			16250
3	30192130/1	Մատիտ	150			525			900			1500			1500
4	30197232/1	Թղթապանակ, արագակար, թղթյա	3487			12204.5			20922			34870			34870
5	30197234/1	Թղթապանակ կոշտ կազմով	4675			16362.5			28050			46750			46750
6	39292530/1	Քանոն, մետաղյա	140			490			840			1400			1400
7	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	2000			7000			12000			20000			20000
8	39263410/1	Ամրակ, փոքր	160			560			960			1600			1600

9	30192100/1	Ռետին հասարակ	50	175	300	500	500
10	39263420/1	Ամրակ, մեծ	200	700	1200	2000	2000
11	30197111/1	Կարիչի մետաղալարեր, փոքր	120	420	720	1200	1200
12	30197112/1	Կարիչի մետաղալարեր, միջին	140	490	840	1400	1400
13	30192710/1	Սոսնձամատիտ, գրասենյակային	180	630	1080	1800	1800
14	30197322/1	Կարիչ 20-50 թերթերի համար	750	2625	4500	7500	7500
15	30197323/1	Կարիչ 50-100 թերթերի համար	2325	8137.5	13950	23250	23250
16	30192720/1	Գծանշիչ	540	1890	3240	5400	5400
17	30197332/1	Դակիչ, միջին	250	875	1500	2500	2500
18	30197331/1	Դակիչ, մեծ	1600	5600	9600	16000	16000
19	30192133/1	Սրիչներ	160	560	960	1600	1600

21	39241141/1	Գրասենյակային դանակ, մեծ	1100	3850	6600	11000	11000
22	39241141/2	Գրասենյակային դանակ, փոքր	160	560	960	1600	1600
23	30199420/1	Թուղթ նշումների համար, սոսնձվածքով	1080	3780	6480	10800	10800
24	30199420/2	Թուղթ նշումների համար	150	525	900	1500	1500
25	30192700/1	Գրենական պիտույքներ	360	1260	2160	3600	3600
26	30192160/1	Շտրիխ վրձինով	400	1400	2400	4000	4000
27	30192160/2	Շտրիխ/ժապավենային	640	2240	3840	6400	6400
28	39263510/1	Սեղմակ, փոքր	199	696.5	1194	1990	1990
29	39263520/1	Սեղմակ, միջին	150	525	900	1500	1500
30	39263530/1	Սեղմակ, մեծ	72	252	432	720	720
31	39241210/1	Մկրատ	290	1015	1740	2900	2900
32	39263600/1	Գրչատուփ	580	2030	3480	5800	5800
33	30196100/1	Ժողովների պլանավորման բլոկնոտ	4000	14000	24000	40000	40000
34	31441000/1	Մարտկոց, AAA տեսակի	600	2100	3600	6000	6000
35	31442000/1	Մարտկոց, AA տեսակի	300	1050	1800	3000	3000
36	30197340/1	Ապակարիչ	140	490	840	1400	1400

38	30197230/1	Թղթապանակ	1000	3500	6000	10000	10000
39	22811150/1	Նոթատետրեր	1200	4200	7200	12000	12000
40	30141200/1	Հաշվասարք, գրասենյակային	1600	5600	9600	16000	16000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
«ՀՀ տնտեսական մրցակցության
պաշտպանության պետական
հանձնաժողովի»
Հասցե՝ ք. Երևան, Մ. Մկրտչյան 5բ
ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան
գործառնական վարչություն
Հ/Հ 900011566057
ՀՎՀՀ 01538354
Ա. Վահանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Սմարթլայն ՍՊԸ
Ք.Երևան, Վարդանյան 110
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150009537660100
ՀՎՀՀ 01548908
տնօրեն Տ.Ղարիբյան

(ստորագրություն)
Կ.Տ

«19» 03 Հավելված N 3
2020թ. կնքված
ՀՀ ՏՄՊՊՀ-ՄԱԱՊՁԲ -20/11 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» 03 2020թ. կնքված
ՀՀ ՏՄՊՊՀ-ՄԱԱՊՁԲ -20/11 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

---

[i] Սույն կետում նշվում է գնման առարկայի մեկ միավորի ձեռքբերման համար նախատեսված առավելագույն գինը: